ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹԱԻԼԱՆԴ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

   Արմինե Ալավերդյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետ

   Մերի Գասպարյան, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Բանգկոկ (Թաիլանդ), 2026 թվականի փետրվարի 16-ից 19-ը:

3. **Հրավիրող կողմը.**

   ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ:

4. **Գործուղման նպատակը.**

Գործուղման նպատակն էր մասնակցել «Գենդեր-արձագանքող և ներառական սոցիալական պաշտպանություն» թեմայով գլոբալ սիմպոզիումին, որը համախմբել էր տարբեր երկրների պետական կառույցների ներկայացուցիչների, միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ակադեմիական շրջանակների և զարգացման գործընկերների ներկայացուցիչների:

Սիմպոզիումի նպատակն էր՝

- խթանել գենդերային հավասարության ինտեգրումը սոցիալական պաշտպանության համակարգերում,
- ներկայացնել լավագույն միջազգային փորձը,
- քննարկել ներառական քաղաքականությունների մշակման և իրականացման գործիքակազմը,
- ամրապնդել երկրների միջև համագործակցությունը:

5. Քննարկված թեմաները.

Միջոցառմանը բացման խոսքով հանդես եկան Ավստրալիայի արտաքին գործերի և առևտրի նախարարության (DFAT), Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի, համագործակցության և զարգացման գրասենյակի (FCDO) ներկայացուցիչները, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի գրասենյակի տնօրենը:

Միջոցառման նպատակներից էր կիսվել համաշխարհային փորձով, ուսումնասիրել գենդեր-արձագանքող սոցիալական պաշտպանության համակարգերի ներդրման առավելություններն ու մարտահրավերները:

Սիմպոզիումի ընթացքում քննարկվեցին հետևյալ առանցքային ուղղությունները.

- Գենդերային զգայուն սոցիալական պաշտպանության քաղաքականությունների մշակման մեխանիզմներ
- Կանանց և խոցելի խմբերի տնտեսական հզորացում
- Սոցիալական պաշտպանության համակարգերի դերը աղքատության և անհավասարության կրճատման գործում
- Գենդերային բյուջետավորում և տվյալների հավաքագրում
- Ճգնաժամային իրավիճակներում (կլիմայական, տնտեսական, համավարակային) սոցիալական պաշտպանության արձագանքող մեխանիզմներ
- Թվայնացում և սոցիալական ծառայությունների հասանելիության բարելավում:

Առանձին ուշադրություն դարձվեց գենդերային խտրականության բազմաշերտ դրսևորումներին և միջոլորտային մոտեցումների կիրառմանը:

Միջոցառման ընթացքում իրենց երկրների փորձին անդրադարձան Անգոլայի, Նեպալի, Ֆիլիպինների, Ուրուգվայի, Ֆիջիի, Եթովպիայի, Ինդոնեզիայի, Մոնղոլիայի ներկայացուցիչները: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչները ներկայացրեցին թեմային առնչվող շնորհանդեսներ, այդ թվում՝ «Արևելյան Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում գենդեր-արձագանքող սոցիալական պաշտպանության լանդշաֆտային քարտեզագրում. արդյունքներ և հետագա քայլեր» թեմայով:

Ներկայացվեցին գործնական ուսուցման մոդուլներն ու ռեսուրսները, որոնք հասանելի են կառավարությունների, գործակալությունների և գործընկերների կարողությունները զարգացնելու համար:

Անցկացվեցին թեմատիկ քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցները բաժանվեցին թեմատիկ խմբերի, կազմակերպվեցին կլոր սեղան քննարկումներ: Թեմատիկ քննարկումների ընթացքում ներկայացրել ենք հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի ոլորտի բարեփոխումները և անապահովության գնահատման նոր համակարգը:

Մասնակցել ենք «Գենդերային համընդգրկման քաղաքականությունը սոցիալական պաշտպանության ոլորտում» կլոր սեղան քննարկմանը, որի ընթացքում ներկայացրել ենք ՀՀ-ի փորձը երկրում գենդերային հավասարության երաշխավորման, գենդերային համընդգրկման քաղաքականության ապահովման, կանանց և աղջիկներին մատուցվող սոցիալական աջակցության ծրագրերի ու ծառայությունների, կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի, ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգում տեղի ունեցող բարեփոխումների վերաբերյալ: Անդրադարձել ենք ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գործող աջակցության կենտրոնի ծառայություններին, ընտանեկան բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններին, կանանց տնտեսական հզորացման ծրագրերին, այդ թվում՝ ընտանեկան բռնության ենթարկված անձանց տնտեսական հզորացման ծրագրեր, թվային հմտությունների զարգացման ծրագրեր: Անդրադարձել ենք նաև «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններին ու դրանցից բխող նոր կարգավորումների կարևորությանը: Ներկայացրել ենք ընտանեկան և կենցաղային բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման համակարգը՝ որպես ՀՀ-ում ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ մեկ միասնական, համալիր հաշվետվությունների ձևավորման և հավաքագրման թվային լուծում: Անդրադարձել ենք ՀՀ-ում գենդերային քաղաքականության իրականացման 2025-2028 թթ. ռազմավարությանը, դրա գերակա ուղղություններին, ակնկալվող արդյունքին և նախատեսվող միջոցառումներին: Կարևորել ենք ՀՀ կողմից ԱՄԿ 190 կոնվենցիայի վավերացումը՝ որպես աշխատավայրում կանանց նկատմամբ բռնության և ոտնձգության կանխարգելման առանցքային բաղադրիչ: Քննարկման արդյունքներն ամփոփեց «Save the Children» կազմակերպության ներկայացուցիչը, ով Հայաստանի օրինակը ներկայացրեց որպես լավ փորձ ինչպես երկրում գենդերային քաղաքականության իրականացման, այնպես էլ սոցիալական պաշտպանության ոլորտի բարփոխումների համատեքստում:

Միջոցառման ընթացքում քննարկվել են հարցեր, թե սոցիալական պաշտպանությունն ինչպես կարող է անդրադառնալ գենդերային անհավասարության առանձին և միջոլորտային խնդիրներին: Կազմակերպվել են պանելային քննարկումներ, որոնց հաջորդել են ակտիվ քննարկումներ, հարց ու պատասխան: Մասնակցել ենք գենդերի հիմքով բռնության, կանանց տնտեսական հզորացման վերաբերյալ քննարկումներին:

Միջոցառումը եզրափակվեց թեմային առնչվող դասընթացներից քաղված դասերի և տարբեր երկրների փորձի վերաբերյալ արձագանքների փոխանակմամբ:

«Գենդեր-արձագանքող և ներառական սոցիալական պաշտպանություն» գլոբալ սիմպոզիումը կարևոր հարթակ էր փորձի փոխանակման, գիտելիքների խորացման և միջազգային համագործակցության ընդլայնման համար:

Սիմպոզիումը կարևոր էր հետևյալ տեսանկյուններից.

- Միջազգային փորձի ուսումնասիրություն՝ ներկայացվեցին նորարարական ծրագրեր, որոնք կարող են կիրառելի լինել ազգային մակարդակում:
- Քաղաքականության բարելավման գործիքներ՝ ընդգծվեց տվյալահեն քաղաքականությունների կարևորությունը:
- Գենդերային վերլուծության խորացում՝ սոցիալական պաշտպանության ծրագրերում գենդերային ազդեցության գնահատման մեխանիզմների ներդրման անհրաժեշտություն:
- Գործընկերային ցանցերի ընդլայնում՝ ձևավորվեցին համագործակցության հնարավոր ուղղություններ:

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

7. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկում ենք՝

- քննարկել փորձի փոխանակման և համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունը «Գենդերազգայուն և գենդեր-արձագանքող

մեխանիզմների ներդրումը սոցիալական պաշտպանության համակարգում» թեմայի շրջանակում,

- իրականացնել աշխատանքներ «Գենդեր-արձագանքող մոտեցումների ներդրումը սոցիալական պաշտպանության համակարգում» թեմայով և հարակից այլ թեմաներով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից մշակված վերապատրաստման ծրագրերը տեղայնացնելու, թարգմանելու և դրանց հիման վրա ոլորտում ներգրավված մասնագետների վերապատրաստման դասընթացներ իրականացնելու ուղղությամբ:

Ստորագրությունը, ամսաթիվը:

Արմինե Ալավերդյան

Մերի Գասպարյան

26.02.2026